

կարեւոր տուեալ, որը տալիս է Կեչառիսի «ժամատան երգիկի կամարի [Հարաւահայ- յեաց] գարնէզի վերայ»-ի արձանագրու- թիւնը²⁰⁷: Եօթ մետր բարձրութեան վրայ՝ գաւթի երգիկի տակ «կախուած» այդ վի- մագիրը (որի որոշ տառեր մի վաղ վերա- կանգնման ժամանակ արուած կրասուաղի տակ միայն մօտիկից են «չօշափուում») ստուգել ենք տեղում (Յոլակ եւ Գեւորգ Յակոբեանների հետ), ուստի բերում ենք ամբողջութեամբ: Կամարի երկու շարք քարերի վրայի 6 տողանոց ծաւալուն բնա- գիրն ընթերցւում է.

«Աւզնութեամբ Ամենայնս՝ Երրորդու- թե[ա]յնն, ես՝ Զալալ Հասան, որդի Վախ- թանգայ, որդոյ Մեծին Հասանայ, տէր /

Խոյախան բերդոյ եւ Խաչնոյ, եւ ա- մուսին իմ Մամբան, դուստր²⁰⁸ Բաղայ թագաւորին, միալբանեցաք մեծ եւ հռչա- կաւոր ս՝ Ե ուխտ/

Իս Կեչառուաց, եւ տուաք²⁰⁹, յաւեր- ման Նետողաց բազում գանձիւք վերստին

նորոգեցաք, եւ տուաք յամէն ամի ի հա- րաւոն²¹⁰ վաճառէն իմ դաւկատ²¹¹ //

(ԹՎԻՆ : ՈՂԷ: [=1248 թ.] յառաջնոր- դութիւն Մխիթար վարդապետին: Վարդապե- տերս եւ այլ միալբանքս ընկալան եւ սահ- մանեցին մեզ՝ :Բ: աւր պատարագ զամէն եկեղեց/

Իքս, զԱւագ գատիկն ինձ եւ :Գ: շա- բաթն աւրն Մամբանայ: Կատարիչք գրոյս ա՝ Բ հին յԱ՝՝՝՝՝՝՝՝, իսկ որ խափանէ ի մերոց կամ յաւագ/

աց կամ յիշխանաց եւ յառաջնորդաց, մեր մեղացս պարտական է եւ :ՅԺԸ: Հայ- րապետացն նզոված է: Կատարիչքն ա՝ Բ հին»²¹²:

Արդ, ակնյայտ է թւում, որ Կեչառի- սում Հասան Զալալի եւ իր կնոջ փառահեղ նուիրատուութիւնը հնարաւոր չէ վերագրել մոնղոլների սկսած ծանրագոյն հալա- ծանքներին անմիջապէս յաջորդող ժամա- նակին: Հետեւաբար, այդ հալածանքները (ուստի եւ՝ Խաչէն-Խոյախանաբերդի կործա- նումը) կարող են թուագրուել 1248 թ. ոչ վաղ: Ի դէպ, դա ինչ-որ չափով երեւում է նաեւ Կիրակոս Գանձակեցու շարադրանքի

207 Տե՛ս Գ. կաթ. Յովսէփեան, *Խաղարկեանք կամ Պոջեանք հայոց պատմութեան մէջ*, մասն I, Վաղարշապատ, 1928, էջ 317: Հմմտ. Յովհ. եպ. Ըանխաթունեանց, *Ստորագրութիւն Կաթողի- կէ Էջմիածնի*, հտ. Բ, էջ 195. Կ. Կոստանեանց, *Վիմական տարեգիր. Յուցակ ժողովածոյ ար- ձանագրութեանց*, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 92. Է. Լ. Գանիէլեան, *Գանձասարի պատմութիւն*, էջ 128-129:

208 *ԴՈՒՍՏՐ* բառն այս բնագրում յայտնուել է, թերեւս, իբրեւ «գրագէտ» փորագրողի «նախա- ձեռնութիւն-վրիպակ»: Նրան տրուած «պատուի- րաթղթում», անշուշտ, պիտի լինէր ԹՈՒՆ, ինչ- պէս վերեւում նշուած մի քանի վիմագրում է, ուր այդպէս է կոչուած Հասան Զալալը, սակայն շա- րադրանքի մի այնպիսի բանաձեւով, որ շփո- թեցրել է շատ հետազօտողների: Այն ճիշտ է հասկացում լոկ փակագծերի յաւելումով. օր.՝ «...Հասան Զալալ՝ որդի Վախթանգայ (եւ ամու- սին իր Մամբան), թո՞ւմ Բաղայ թագաւորին...»:

209 *ՏՈՒԱՔ* բառի վերջին 3 տառերի փորումըն- րը կրասուաղով են լցուած, բայց մօտիկից «չօ- շափում» են (Գար. Յովսէփեանի մօտ՝ տ(ե)սի):

210 Գար. Յովսէփեանը հրատարակել է *յամարէն* փխ *հարաւոյլ*: Մշտիտ ընթերցել է արդէն վի- մագրագէտ Գագիկ Սարգսեանը (խորհրդա- տութեան եւ իր վերծանութիւնը մեզ սիրալիի կերպով տրամադրելու համար յայտնում ենք նրան մեր երախտագիտութիւնը): Վիմագրի յա- ջորդ բառը վրիպակով է՝ *վաճառէն* փխ *վաճա- ռէն*, որը հրատարակիչներն իրաւացիօրէն սր- բագրել են:

211 Հրատարակիչների մօտ՝ *դուկատ* փխ *դաւկատ*, որը ճշտել է արդէն Գ. Սարգսեանը: Երրորդ տողաւարտում փորագրուած այս բառից լետոյ նախադասութիւնը պարզ շարունակում է, ըստ ամենայնի, յաջորդ տողակագրում *նախապէս* գրուած թուականից լետոյ (դա նաեւ կամարի քարերի երկրորդ շարքի սկիզբն է): Թուականի բոլոր 6 տառերն էլ մի փոքր աւելի մեծ են: Փակագծերով առանձնացնելու փոխարէն (ինչ- պէս արել ենք մենք), թուականը կարելի էր վե- րականգնել նաեւ բնագրի սկզբում:

212 Տե՛ս ծնթ. 207: